



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 13/21

01.06.2021թ.

ք. Երևան

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ և 79-րդ հոդվածներին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից բխում է, որ վճիռը կարող է բողոքարկվել նաև միայն պատճառաբանական մասով՝ առանց անդրադառնալու վճռի եզրափակիչ մասին, որով բավարարվել են կամ չեն բավարարվել հայցի պահանջները: Տվյալ դեպքում Օրենքի վիճարկվող դրույթի անհամաչափ դատական ծախսով է ծանրաբեռնվում (հայցագնի երեք տոկոսի չափով պետական տուրքի գումար) վճռի միայն պատճառաբանական մասի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքը:

Դիմողի մեկնաբանմամբ, Օրենքի վիճարկվող դրույթի տառացի մեկնաբանությունից բխում է, որ «բողոքարկվող» բառը վերաբերում է «առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցին»: Այսինքն՝ հայցը պետք է լինի հարուցված և բողոքարկված: Ինչպես հայտնի է՝ հայցը չի հարուցվում, այլ հարուցվում է գործը՝ ներկայացված հայցի հիման վրա: Հավասարապես, հայցը չի բողոքարկվում վերաքննության կարգով, այլ բողոքարկվում է հայցի հիման վրա հարուցված գործի քննության արդյունքում կայացված վճիռը: Հետևաբար, վիճարկվող դրույթի տառացի

մեկնաբանության դեպքում այն առհասարակ պետք է չկիրառվի: Ակնհայտ է, որ առկա է օրենքի դրույթի առերևույթ ոչ ստույգ շարադրանք, որի տառացի նշանակությունը չի արտացոլում օրենսդրի կամքը, քանի որ գուրկ է իմաստից: Նման պարագայում, վերաքննիչ դատարանը տվել է նորմին այլ մեկնաբանություն՝ համարելով, որ պետական տուրքը պետք է վճարվի ոչ թե «առաջին աստյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի երեք տոկոսի չափով», այլ «առաջին աստյանի դատարանում հարուցված գործով բողոքարկվող վճռի կայացման համար հիմք հանդիսացած հայցի հայցագնի երեք տոկոսի չափով»: Դիմողը գտնում է, որ նման բովանդակությամբ նորմը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Օրենքի վիճարկվող դրույթը հավասարապես վերաբերում է հետևյալ դեպքերին՝

1. վերաքննիչ բողոքում վիճարկվում է հայցի վճռով բավարարումը կամ մերժումը՝ հայցագնի ողջ գումարի չափով

2. վերաքննիչ բողոքում առհասարակ չի վիճարկվում պահանջի բավարարումը կամ մերժումը, և վճիռը բողոքարկվում է միայն պատճառաբանական մասով:

Պատճառաբանական մասի վերանայման պահանջի հիմքը, ըստ էության, դատարանի կողմից թույլ տրված ենթադրյալ թերացումն է, որը վերանայելու համար Օրենքը վիճարկվող դրույթով անհամաչափ ծախսեր է դնում դատավարության կողմերի վրա՝ գանձվող պետական տուրքի չափն առանց որևէ իրավաչափ հիմքի կապելով երկու մասնավոր անձանց միջև վեճի արժեքի (գույքային պահանջի չափի) հետ: Կողմերի համար նման ծանրաբեռնվածությունն առաջացնելով՝ Օրենքը չի հետապնդում Սահմանադրությամբ սահմանված որևէ լեգիտիմ նպատակ, ինչի արդյունքում խախտվում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

Այս առումով պետությունը պարտավոր է ստեղծել օրենսդրական այնպիսի կառուցակարգեր, որոնք թույլ կտան արդյունավետ ձևով կանխել մարդու իրավունքների խախտումները, իսկ այդպիսիք տեղի ունենալու դեպքում կվերացնեն դրանք՝ վերականգնելով մարդու խախտված իրավունքներն ու ազատությունները:

Մինչդեռ, չտարբերակելով վերաքննիչ բողոք բերելու համար վճարման ենթակա պետական տուրքի գումարի չափն այն իրավիճակների համար, երբ բողոք է ներկայացվում վճռի միայն պատճառաբանական մասի դեմ և բողոք բերող անձի կողմից ընդհանրապես չեն վիճարկվում առաջին աստյանի դատարանում բավարարված կամ

չբավարարված պահանջները՝ Օրենքի վիճարկվող դրույթը դատավարության կողմերի համար առաջացնում է սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն և չի ստեղծում գործով շահագրգիռ այլ անձանց, այդ թվում՝ պատասխանողի համար Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված իրենց իրավունքների և պարտականությունների արդյունավետ իրացման համար բավարար նախադրյալներ:

Ավելին, Օրենքի վիճարկվող դրույթն ինքնահակասական է, քանի որ, եթե դատարանի կողմից X փաստի սխալ ճանաչման արդյունքում հայցը բավարարվեր մասնակի, օրինակ 2.000.000 ՀՀ դրամի չափով, ապա պատասխանողը հնարավորություն կունենար վիճարկել վճիռը՝ հայցի մասնակի (նույնիսկ 1.000.000 ՀՀ դրամի չափով) բավարարող մասով և բողոքում կկարողանար անդրադառնալ նաև վճռի պատճառաբանական մասին նույն ծավալով, որի պարագայում կվճարեր ընդամենը 30.000 ՀՀ դրամ պետական տուրք:

Առավել ցայտուն կերպով արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և արդարադատության մատչելիության սկզբունքների խախտումն արտահայտվում է հատկապես աշխատանքային վեճերով, երբ հայցվոր աշխատողն ազատված է պետական տուրքից և կարող է պրակտիկորեն անհետևանք ներկայացնել ցանկացած մեծության պահանջ, իսկ գործատուն ազատված չէ պետական տուրքի վճարման պարտավորությունից: Նման պարագայում ցանկացած անհիմն կամ մասնակի հիմնավոր, սակայն անհիմն ուռճացված պահանջ ներկայացնելու դեպքում պատասխանող գործատուն փաստացի զրկվում է վճռի միայն պատճառաբանական մասի դեմ բողոք ներկայացնելու իրատեսական հնարավորությունից, որով կկարողանար պահանջել վերանայել նման վճռով սխալ կերպով հաստատված ցանկացած փաստ կամ այլ պատճառաբանություն, որով կարող է անբարենպաստ դատական պրակտիկա ձևավորվել: Այդպիսով կանխվում է դատական պաշտպանությունից օգտվելու հնարավորությունը, ինչը խիստ անհավասար վիճակի մեջ է դնում աշխատանքային վեճի կողմերին՝ միանգամայն անարդարացի կերպով: Նման դեպքում չի ապահովվում արդարադատության մատչելիությունը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ և 79-րդ հոդվածներին:

Օրենքի վիճարկվող դրույթի բովանդակությունը հետևյալն է.

Առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճարեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1. հայցադիմումների և որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ գործին մասնակցելու մասին դիմումների համար՝

6. դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝	
ա) դրամական պահանջի գործերով	վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի երեք տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի երեք տոկոսի չափով

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Այսպես, Դիմողը վիճարկում է վերաքննիչ բողոք ներկայացնելու համար Օրենքով նախատեսված պետական տուրքի չափի վերաբերյալ առկա կարգավորումն առ այն, որ անկախ այն հանգամանքից՝ վիճարկվում են առաջին աստիճանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, պետական տուրքի չափը երկու դեպքում էլ կազմում է նույն գումարը՝ առաջին աստիճանի դատարան ներկայացված հայցի հայցագնի երեք տոկոսի չափով:

Վիճարկվող դրույթի սահմանադրականությանը անդրադառնանք արդարադատության մատչելիության սկզբունքի, անձի՝ դատարան դիմելու իրավունքի հնարավոր սահմանափակման և դրա համաչափության տեսանկյունից:

Որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է ապահովի, որ ներպետական դատարանակազմությունը և դատական ընթացակարգերը համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին, որպեսզի երաշխավորվի անձի՝ դատարան դիմելու իրավունքը:

Անդրադառնալով անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներին՝ Սահմանադրական դատարանը 2007 թվականի հունվարի 16-ի ՄԴՌ-673 որոշման մեջ արձանագրել է. «8.Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18 հոդվածի նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է»:»

Անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքին՝ վերադատության կարգով բողոքարկման ինստիտուտի տեսանկյունից, Սահմանադրական դատարանը

2011 թվականի փետրվարի 8-ի ՄԴՈ-936 որոշման մեջ նշել է. «5. Միաժամանակ, սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (ՀՀ Սահմ. 20-րդ հոդվածի 3-րդ մաս): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականությունն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը:»:

Անդրադառնալով բողոքարկման ինստիտուտի էությանը՝ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՄԴՈ-719 որոշման մեջ արձանագրել է. «5. Բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը՝ ընդհանրապես, և արդարադատության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը:»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար: Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեզիտիմ ակնկալիքով:

Անդրադառնալով մարդու իրավունքների սահմանափակման հնարավորությանը, Սահմանադրական դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՄԴՈ-649 որոշման մեջ արձանագրել է. «... Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով

համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չգրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը):»:

Սահմանադրական դատարանը, 2007 թվականի փետրվարի 7-ի ՄԴՈ-677 որոշման մեջ անդրադառնալով համաչափության սկզբունքին, արձանագրել է հետևյալը. «Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար:»:

Ստացվում է, որ օրենսդիրը պարտավոր է նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, որոնք բացառեն անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների որևէ սահմանափակում, եթե այն պայմանավորված չէ Սահմանադրությամբ թույլատրելի հանգամանքներով: Այլ կերպ, եթե որևէ իրավակարգավորման շրջանակներում խախտվում է այդ պահանջը, ապա այն դադարում է իրավական և սոցիալական, հետևաբար՝ նաև սահմանադրական լինելուց, իսկ օրենքով համապատասխան երաշխիքների (կանոնակարգման) բացակայությամբ էլ՝ պայմաններ են ստեղծվում հակասահմանադրական իրավիճակի առաջացման համար: Հետևաբար, օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին (ՄԴՈ-1244):

Դատական պաշտպանության իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է: Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է

պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում: Հակառակ պարագայում արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացումը դառնում է ոչ մատչելի և թերի, չի բխում իրեն իրավական հոչակած պետության և ժողովրդավարական հասարակության նպատակներից:

Երաշխավորելով անձի դատական պաշտպանության իրավունքը, պետությունն, այնուամենայնիվ, նախատեսել է դատական պաշտպանության իրավունքի իրացման՝ դատարան դիմելու, որոշակի պայմաններ, որոնցից մեկը պետական տուրքի վճարման պարտականությունն է: Դատարաններում պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը, դատարան դիմելու իրավունքի չարաշահումը: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքն առանձնացնում է գույքային պահանջի և ոչ գույքային պահանջի առնչությամբ գանձվող պետական տուրքերը՝ դրանց համար սահմանելով հաշվարկման միայնցից էապես տարբերվող կարգ, ինչն օբյեկտիվորեն պայմանավորված է այդ պահանջների բնույթով և առանձնահատկություններով: Գույքային պահանջի առնչությամբ գանձվող պետական տուրքը համամասնական տուրք է, և հաշվարկվում է հայցագնի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ, իսկ ոչ գույքային պահանջի առնչությամբ գանձվող տուրքը պարզ տուրք է, և գանձվում է հաստատագրված գումարի չափով:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիման վրա վերահսկողություն է իրականացնում առաջին աստիճանի դատարանի դատական ակտի օրինականության նկատմամբ՝ դրանում տեղ գտած հնարավոր դատական սխալը վերացնելու նպատակով: Ուստի, եթե առաջին աստիճանի դատարանում քննության առարկան մեկ կամ մի քանի պահանջ ներառող հայցապահանջն է, ապա վերաքննիչ դատարանում քննության առարկան ոչ թե առաջին աստիճանի դատարան ներկայացված հայցապահանջում ներառված առանձին պահանջներն են, այլ առաջին աստիճանի դատարանի կողմից թույլ տրված ենթադրյալ դատական սխալը:

Օրենքի վիճարկվող դրույթով առավել ցայտուն կերպով արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և արդարադատության մատչելիության սկզբունքների խախտումն արտահայտվում է հատկապես այն վեճերով, երբ հայցվորն ազատված է պետական տուրքից և կարող է ներկայացնել ցանկացած մեծության պահանջ, իսկ պատասխանողն ազատված չէ պետական տուրքի վճարման պարտավորությունից: Նման պարագայում ցանկացած անհիմն կամ մասնակի հիմնավոր, սակայն անհիմն ուռճացված պահանջ ներկայացնելու դեպքում պատասխանողը փաստացի զրկվում է վճռի միայն պատճառաբանական մասի դեմ բողոք ներկայացնելու իրատեսական հնարավորությունից, քանի որ նման բողոք բերելու համար անհրաժեշտ է վճարել հայցագնի երեք տոկոսի չափով պետական տուրք: Այդպիսով ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ դատական պաշտպանությունից օգտվելու հնարավորությունը կախման մեջ է դրվում անձի՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից: Այսինքն՝ անձը, ըստ էության, համաձայն լինելով առաջին ատյանի դատարանի կայացրած վճռի հետ (հատկապես այն դեպքերում, երբ կայացվել է անձի օգտին դատական ակտ), այնուամենայնիվ, իր համար անբարենպաստ մեկնաբանություններով պատճառաբանական մասի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար ստիպված է վճարել գույքային բնույթի վեճի համար նախատեսված պետական տուրք, այն էլ հայցագնի երեք տոկոսի չափով: Այս առումով հարկ ենք համարում մեջբերել ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 14-ի ՄԴՈ-929 որոշման մեջ տեղ գտած հետևյալ դիրքորոշումը. «Ըստ գործի նյութերի՝ Հայաստանի Հանրապետությունում ոչ միայն նման ընթացակարգ գոյություն չունի, այլև ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ առաջին ատյանի դատարանի որոշման առկայության դեպքում, որով անձը ճանաչվել է տուժած և նախատեսվել է պատճառված վնասի հատուցում, վերաքննիչ բողոքի դեպքում նույնպես անձը չի ազատվում պետական տուրքի վճարումից: Փաստորեն ապօրինի քրեական հետապնդման ենթարկվելու դեպքերում հասցված վնասի հատուցում պահանջելու համար անձն ստիպված է վճարել պետական տուրք, որի չափը կարող է ընդհուպ գերազանցել հատուցվելիք գումարը: Սույն խնդիրը համալիր իրավակարգավորման անհրաժեշտություն ունի, որը պետք է, մի կողմից, հաշվի առնի, որ անձին վնաս կարող է պատճառվել նաև հանրային իշխանության մարմինների գործողությունների (անգործության) հետևանքով: Մյուս կողմից՝ արդարացված անձին ապօրինաբար պատճառված վնասը հատուցելը և նրա

խախտված իրավունքները վերականգնելը պետք է դիտվեն որպես սահմանադրական անվերապահ պահանջ, որպես անձի իրավունք, իսկ այն իրացնելու օրենսդրական ընթացակարգերը չեն կարող աղավաղել այդ իրավունքի էությունը կամ օրենքի բացի արդյունքում ընդհուպ արգելափակել այն:»:

Նշված դիրքորոշումը սույն դիմումում բարձրացված խնդրի հետ համադրման արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ վճռի միայն պատճառաբանական մասի դեմ բողոք բերելու համար նախատեսված պետական տուրքի գումարի չափը հայցագնի չափի հետ պայմանավորելը և դրանից անձի իրավունքների պաշտպանությունը կախվածության մեջ դնելը համարվում է անձի՝ սահմանադրորեն երաշխավորված դատական պաշտպանության իրավունքին անհամաչափ միջամտություն և սահմանափակում, հատկապես եթե խնդիրը դիտարկենք ան տեսանկյունից, որ վերաքննիչ դատարանը տվյալ պարագայում քննում է ոչ թե գույքային կամ ոչ գույքային պահանջ, այլ ստուգում է ստորադաս դատական աստիճանի կայացրած որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը:

Գործող իրավակարգավորումը վկայում է, որ կիրառված միջոցի և հետապնդված նպատակի միջև չկա ողջամիտ համաչափություն՝ ստեղծվել է ոչ իրավաչափ հավասարակշռություն անձի խախտված իրավունքների վերականգնման և պետության շահերի պաշտպանության միջև, որն աղավաղում է արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքի էությունը:

Ավելին, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դատական աստիճանի գործառույթի իրացման արդյունքում անձի իրավունքների դատական պաշտպանությունը նոր որակ է ստանում, յուրաքանչյուր դատական աստիճանի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում, ապա կարելի է փաստել, որ գործող կարգավորումը առնվազն չի համապատասխանում Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ չէ դրանց հասնելու համար: Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է, այլ նաև այն հիմնական և էական իրավական երաշխիքը, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի և Եվրոպական

կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, անձը, չունենալով կամ անհամաչափորեն սահմանափակված լինելով վերաքննության իրավունքից, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից:

Վերոգրյալից ելնելով՝ հանգում ենք այն եզրակացության, որ օրենսդրորեն պետք է տարբերակված մոտեցում դրսևորվի այն դեպքերի համար, երբ

1. վիճարկվում է առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջը,

2. բողոքարկումը կապված չէ առաջին առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջների հետ:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև վիճարկվող դրույթի շարադրանքին՝ իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից:

2019 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1452 որոշում. «Իրավական որոշակիության սկզբունքն ընկած է Սահմանադրության անփոփոխելի 1-ին հոդվածի հիմքում, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, **իրավական պետություն է:**

Իրավական պետությունը ենթադրում է իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի հնարավորինս հստակ ու որոշակի և հնարավորություն տա դրա հասցեատերերին ձևավորելու և դրսևորելու համապատասխան վարքագիծ: Վերոնշյալ դիրքորոշումը հաստատվում է Սահմանադրական դատարանի 08.04.2008թ. ՍԴՈ-753 որոշմամբ, որում, մասնավորապես, նշվում է. «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է

հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ ՄԴՈ-1176 որոշմամբ կարևորել է նաև օրենսդրության մեջ կիրառվող հասկացությունների հստակությունը, նշելով, որ «...իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության»:

Վիճարկվող դրույթի «... , ապա առաջին աստիճանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի երեք տոկոսի չափով» եզրույթն ինքնին ոչ ճիշտ շարադրանք է, քանի որ դատարանում հարուցվում է ոչ թե հայց, այլ գործ՝ ներկայացված հայցի հիման վրա: Իր հերթին՝ վերաքննության կարգով բողոքարկվում է ոչ թե հայցը, այլ հայցի հիման վրա հարուցված դատական գործի քննության արդյունքում կայացված դատական ակտը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ստացվում է, որ եթե նույնիսկ առաջնորդվենք այն հանգամանքով, որ օրենքները ձևակերպվում են առավելապես ընդհանուր և վերացական, քան մասնավոր, և օրենսդրական դրույթների հնարավոր թերի ձևակերպումները կամ պրակտիկայում դրանց ընկալումը հնարավոր է կարգավորել դատական նախադեպերով և այդ նորմերին տրված մեկնաբանություններով, այնուամենայնիվ, գտնում ենք, որ գործող շարադրանքը իրավաբանական առումով սխալ է, որը հանգեցնում է անձանց կողմից այդ նորմի ոչ միանշանակ կամ թյուր ընկալմանը կամ ընդհանրապես չընկալմանը: Հաշվի առնելով, որ իրավական ակտերում օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ,

որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության՝ կարծում ենք, որ վիճարկվող նորմը իրավական որոշակիության տեսանկյունից ևս խնդիրներ է առաջացնում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ և 79-րդ հոդվածներին խնդրահարույց է:

 Recoverable Signature

Համակարգող՝

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169